

ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՏԱՐՐԵՐԸ ԳԱՐԵԳԻՆ ՆԺՂԵՀԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Սոյն ոսումնասիրութեամբ, փաստական առատ նիւթի հիման վրայ, փորձ է արւում անդրադառնալու Գարեգին Նժդեհի գրելածեւի մի կողմին՝ ծրագրային կերպով արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի միատեղ գործածութեանը:

Գարեգին Նժդեհի ստեղծագործութիւններում արեւմտահայերէնն ամէնուրեք է: Արեւմտահայութեան եւ նրա լեզուաճիւղի շունչը մեզ ուղեկցում է ընթերցանութեան բոլոր ճամբաներում: Գեղարուեստական գրականութիւնից կատարւում են մէջբերումներ արեւմտահայ գրողներից, օտար հեղինակներից, արեւմտահայերէնով կատարուած թարգմանութիւններից: Նրա երկերի ուրոշ հատուածներ, նաեւ զգալի թուով ամբողջական ստեղծագործութիւններ գրուած են արեւմտահայերէնով: Թէեւ Նժդեհը հիմնականում լրել է արեւելահայերէն, բայց արեւմտահայերէնից գործածուած են բառային տարբերակներ, բառեր, բառաձեւեր՝ յաճախ արեւելահայերէնի հետ համատեղ միեւնոյն կամ տարբեր նախադասութիւններում: Քննենք արեւմտահայերէնի ներկայուածութիւնը մշտապէս յիշեցնող լեզուատարներն առանձին-առանձին:

1. Բառային տարբերակներ

Աւետիսեանը, իր Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն¹ աշխատութեան մէջ մանրազնին կերպով քննութեան առնելով արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի բառերում հնչիւնների գրութեան եւ արտասանութեան տարբերութիւնները, նկարագրել է նաեւ այն պատճառները, որոնք յանգեցնում են երկու լեզուաճիւղերում նոյն բառի տարբերակներին: Հիմք ընդունելով նշուած աշխատութիւնը՝ պարզ է դառնում, որ այդպիսի բառային տարբերակների միայն մի մասն

¹ ԱՒԵՏԻՍԵԱՆ, Յ., Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն, Ջամգակ-97, Երևան 2011:

է տեղ գտել Նժդեհի երկերում, քանի որ նա գրել է ոչ թէ արեւմտահայերէն, այլ միայն վերջինիս տարրերն է գործածել իր երկերում: Արդ, տեսնենք, թէ ինչու եւ ինչ բառային տարբերակներ են մասնաւոր կարգով տեղ գտել քննուող ստեղծագործութիւններում: Տարբեր խօսքաշարերում, այս կամ այն նախադասութեան մէջ, հնարաւոր երկու՝ արեւելահայերէն եւ արեւմտահայերէն բառային տարբերակներից, որոշակի դէպքերում նախապատուութիւնը տրւում է վերջիններին: Այդպիսիք շատ են, եւ հեշտութեամբ կարելի է զանազանել տեսակները:

ա. Զինչիւնափոխուած տարբերակներ

Երբ արեւելահայերէնում թեքման, ածանցման, բառաբարդման հետեւանքով ի, ու ձայնաւորները հնչիւնափոխւում են, արեւմտահայերէնում մնում են անփոփոխ: Ահա այդպիսիք էլ յաճախակի հանդիպում են խօսքաշարերում: Պէտք է նկատել, որ մերթ գործածւում է արեւմտահայերէնի թեքուած բառաձեւը, մերթ արեւելահայերէնի, բայց արեւմտահայերէնի պէս անհնչիւնափոխ՝ որպէս լեզուական խառնուրդի իւրօրինակ եղանակ:

Ի ձայնաւորի հետ կապուած մէջբերումներ. «...հինի աւերակների վրայ...»² (Հ. 581), «...երկաթուղագծից դէպ հիւսիս...» (Հ. 565), «...շղթաները արծիւի թւերի վերածելու արուեստը...» (Հ. 482), «Քիչերը, սակայն շատ ֆիչերն են էաբանօրէն ցանաչում նրան» (Հ. 343), «...ազատ երկիրներում իսկ...» (Հ. 445), «...ուղղուած ոչ... հայ մարմինին, այլեւ հոգեկանին» (Հ. 495): Արեւելահայերէնում ընդունուած համապատասխան հին, երկաթուղագծից, արծիւի, ֆչերը, երկրներում, մարմինն բառաձեւերի փոխարէն:

Ու ձայնաւորի հետ կապուած մէջբերումներ. «այսպէս ցանկունեց թուղթի վրայ» (Հ. 500), «յաղթանակի՝ սուրբի դէմ...» (Հ. 628), «...օտար լուծերի ազդեցութիւնը...» (Հ. 638), «հաւատքի եւ սուրի հերոսներ...» (Հ. 654), «եւ ժողովրդի հօր շունչով օծուած...» (Հ. 344), «յաւիտեանականի շունչից գուրկ է...» (Հ. 650): Արեւելահայերէնում ընդունուած համապատասխան թղթի, սրբի, լծերի, սրի, շնչով, շնչից բառաձեւերի փոխարէն:

բ. Ք-կ հնչիւններով զանազանում

Այս կերպ տարբերակներն առաջ են գալիս այն հանրայայտ լեզուական իրողութեան հետեւանքով, որ արեւմտահայերէնը փո-

2 Հատընտիր, Ամարաս, Երեւան 2011, 581: Այսուհետեւ այս գրքից կատարուած յղումները կը տրուեն շարադրանքում. կը նշուի Հ. եւ էջը:

խառութիւններ կատարում է ուղղակիօրէն անգլերէնից ու ֆրանսերէնից, իսկ արեւելահայերէնը՝ նոյն լեզուներից ռուսերէնի միջնորդաւորմամբ: Իւրաքանչիւր գերակայ լեզու թողնում է իր հնչիւնաբանական ազդեցութիւնը: Այդ պատճառով արեւմտահայերէնի շատ բառերում առկա է ք, իսկ արեւելահայերէնում՝ նոյն բառերի տարբերակներում կ'հնչիւնը: Միատեղ կարող են լինել եւ ուրիշ հնչիւնների տարբերութիւններ: Ինչպէս. մաթեմատիքական||մաթեմատիկական, մետաֆիզիք||մետաֆիզիկ, պալլադեմա||բալլադեմա, ֆալիֆորմիա||ֆալիֆորմիա, քիլոմետր||հիլոմետր, քեքնիքա||տեխնիկա, դիալեկտիքական||դիալեկտիկական, ֆիզիքա-պէս||ֆիզիկապէս. «Թեքնիքան գեմքն է, միջոցը...» (Հ. 63), «Հիմի եւ նորի միջեւ գոյութիւն ունի մի դիալեքտիքական հակասութիւն» (Հ. 581), «Արդիական գեմքերը մաթեմատիքական գեմքեր են...» (Հ. 558) «...հարստահարում է իր մետաֆիզիք էութիւնը» (Հ. 602-603), «...նոսֆի հանեց պալլադեմա ազգերը» (Հ. 592), «Մէկը տեղափոխուում է ֆալիֆորմիա...» (Հ. 208), «...28000 քառ. քիլոմետր տարածութեամբ» (Հ. 54), «...Մտաւոր քէ ֆիզիքապէս զօրաւորները... » (Հ. 452):

գ. Բայական տարբերակներ

Արեւմտահայերէնի մի շարք բայերի եւ դրանց արեւելահայերէն տարբերակների միջեւ կան հնչիւնակազմական զանազանութիւններ: Պատճառները մի քանիսն են: Արեւմտահայերէնում հնչիւնափոխուում է մի շարք բայերի արմատի կամ բայածանցի ա ձայնաւորը՝ կատաղել||կատղել, հասկանալ||հասկնալ, ցերմակաց-նել||ցերմկցնել, մեծանալ||մեծնալ: Սղոում է սոսկածանցի ե հնչիւնը՝ գիտեմալ||գիտնալ: Ե խոնարհման դիմաց ունենք ա խոնարհում՝ հնչիւնական այլ փոփոխութիւնների հետ՝ ցանաչել||ցանչնալ: Ե խոնարհման դիմաց՝ ի խոնարհում. ապրել||ապրիլ, խօսել||խօսիլ: Հնչիւնական այլեւայլ տարբերութիւններ՝ անել||ընել, սպանել||սպաննել, ընկալ||հնկալ եւ այլն: Արեւմտահայերէնի ահա այս կարգի բայերը ժամանակ առ ժամանակ գործածւում են Նժդէհի խօսքում. «Ինչու՞ գիտնալ, քէ ո՞ր օրն է, ո՞ր ժամը...»³: «...19-րդ դարու վերջերին բաժին ինկալ Հայաստանին...» (Հ. 591), «...վշտի մէջ կատղելու փոխարէն...» (Հ. 139), «Եթէ չընեմ այդ, մեղանչած

³ Նորայայտ մամակներ, Հայաստանի ազգային արխիւ, Ե., 2011, 8: Այսուհետեւ այս գրքից կատարուած յղումները կտրուեն շարադրամբում. կը նշուի ՆՆ. էջը:

պիտի լինեմ...հաւատում եմ, որ կըմեմ» (ՆՆ. 60), «...լաւ հասկնամք այդ...» (Հ. 539), «Ես կը ճանչնամ իմ ցեղը...» (Հ. 513): «Սեւամորթին աւելի հեշտ է *ճերմկցնել...*» (Հ. 35): «Իրենց ցեղի կաթով չմեծցած մի քանի հայեր...» (Հ. 433): «Մեր ցեղի կեսն սպաննող թուրքը չէր մնա անպատիժ» (Հ. 520):

դ. Ուղղագրական-արտասանական տարբերակներ

Այստեղ մտնում են այն բառերը, որոնք արեւելահայերէնում եւ արեւմտահայերէնում միմեանցից զանազանում են ուղղագրութեամբ կամ արտասանութեամբ: Ինչպիսիք են՝ բոքիկութիւն||քոպիկութիւն, Բայրոն||Պայրոն, Փամբակ||Փամպակ, հեգ||հէք, փափազ||փափաք, դժգունել||տժգունել, ցար||ճար, բայց աւելի շատ նաեւ այնպիսի բառեր, որ հնչիւնակազմերում ունեն ոչ նշուած կարգի տարբեր մէկ-երկու ձայնաւոր կամ բաղաձայն՝ քախտ||քաղդ, անձնակենտրոն||անձնակեդրոն, պտիկ||պզտիկ, փնտրել||փնտռել, իրարակերութիւն||իրերակերութիւն. «Նա այստեղ ցոյց է տալիս... իր բոպիկութիւնը...» (Հ. 213), «...ճարի եւ սուլթանի թակարդների միջեւ... ճարիզմից եւ սուլթանիզմից ծնած մահը...» (Հ. 436), «...ինչ որ է Պայրոնը Հելլադայի համար» (Հ. 591), «Նորէն խաչեր... մեր հէք հայրենիքում» (Հ. 488), «...միակ փափաքն է ծառայել Զեզ» (Հ. 96), «Փամպակի ձորք սկսեց դողալ ոռումբերի որոտէն» (Հ. 567), «...տժգունել կըսկսէ...» (Հ. 447): Ապա նաեւ. «...իր բաղդին թողնուած Հայաստանի դէմ» (Հ. 272), «Նա յետ մղեց անձնակեդրոն իմաստասիրութիւնը...» (Հ. 147), «...մի անգոր պզտիկ սերունդ...» (Հ. 542), «...մեր բարեկամութիւնը կը փնտռէն բոլորը» (Հ. 40), «Բնաւ կուլտուրական չէ ներքին իրերակերութեամբ բռնուած ժողովուրդը» (Հ. 643):

Այս վերջին կարգի բառերում զգալի է փոխառութիւնները ոռութեանից չկատարելու ազդեցութիւնը՝ մանաւանդ յատուկ անուններում: Եթէ արեւելահայերէնում ընդունուած են Արգենտինա, Տալստոյ, Ռումինիա, Սիրիա, Շւեյցարիա, Ֆրանսա, ապա Նոթհեհի երկերում գործածուած են Արժենտինա, Թուսթոյ, Ռումանիա, Սուրիա, Զուիցերիա, Ֆրանսա եւ այլն. «Օրինակ՝ Արժենտինայի, Զուիցերիայի... եւն...» (Հ. 192), «Թուսթոյի երրորդ որդին սկսել էր մամուլի մէջ քննադատել Թուսթոյականութիւնը» (Հ. 103), «...Յունաստան, Ռումանիա...» (Հ. 88), «Ֆրանսան գրաւած էր Սուրիան» (Հ. 268):

2. Արեւմտահայերէն քառեր

Ռ. Սաքապետոյեանն իր «Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան»-ում⁴ ներառել է ձեւիմաստային առումով արեւելահայերէնից տարբեր 20.000 բառ: Իր Արեւելահայերէնի և արեւմտահայերէնի քառապաշարային առանձնայատկութիւնները⁵ գրութեամբ այդ բառերը խմբաւորել է ըստ ոլորտի պատկանելութեան (կրօնական, ընտանեկան, ծխական, կրթական եւն)՝ 17 բառախումբ ներկայացված 37 էջում:

Սոյն յօդուածի համար հիմք ենք ընդունել Ռ. Սաքապետոյեանի վերը նշուած աշխատութիւնները: Արեւմտահայերէն բառերը ստուգել ենք թէ՛ նրա, թէ՛ Է. Աղայեանի բացատրական բառարաններով: Միաժամանակ հարկ է ասել, որ Նժդէհը գործածել է արեւմտահայերէնի բառապաշարի որոշ տարրեր, այսինքն վերոյիշեալ բառարանների բառաքանակի մի փոքր մասը միայն: Ուստի դրանց մասին խօսել ըստ Ռ. Սաքապետոյեանի դասման հնարաւոր է: Անհրաժեշտութիւն է առաջացել այլ խմբաւորման: Արդ, քննենք, թէ ինչու եւ ինչպիսի տեղ են գրաւել արեւմտահայերէն բառերը Նժդէհի երկերում:

Խօսքի մէջ հնարաւոր արեւելահայերէն եւ արեւմտահայերէն նոյնանիւնների դէպքում Նժդէհը յաճախ նախապատուութիւնը տալիս է երկրորդին: Այդպիսի բառերը շատ են ու պատկանում են գրէթէ բոլոր խօսքի մասերին: Վերջիններիս վրայ կանգ առնենք առանձին-առանձին:

ա. Գոյականներ

Արեւելահայերէնում ընդունուած՝ ժամանակ, արցունք, վայրկեան, լեղապարկ, մեծախօսութիւն, միջակներ բառերի փոխարէն գործածուած են՝ ատեն, արտօսք, երկվայրկեան, լեղուց, մեծ խօսիկութիւն, միջակորեար, ինչպէս յետեւեալ մէջբերումներում. «...այն ատեն դու կը վերյիշես քո հրամանատարին» (Հ. 425), «...թոյն ու արտօսք է կաթեցնում... մեր գինու... քաժակի մէջ» (Հ. 93), «...ունի իր ամենամեայ երկվայրկեանի դադարը, երբ... կը ծնրադրեն... մի նուիրական հողաքմբի առջեւ» (Հ. 444), «Վնոած եմ օպերացիայի ենթարկել լեարդս եւ լեղուցքս» (ՆՆ. 32), «Մեծ խօսիկութիւն էր

4 ՍԱ.ԳԱ.ՊԵՏՈՅԵԱՆ, Ռ., Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր քառաբան, ԵՊՀ, Երեւան 2012:

5 ՍԱ.ԳԱ.ՊԵՏՈՅԵԱՆ, Ռ., Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի քառապաշարային առանձնայատկութիւնները, ԵՊՀ, Երեւան 2004, 38-75:

իր՝ «Մենք աճում ենք երկաթից» աղմուկը» (Հ. 627), «...տնտեսական տկարութիւն հայ *միջակորեար* դասի...» (Հ. 187):

բ. Ածական

*Արեւելահայերէնում՝ կապուտաչեայ, արեւմտահայերէնում՝ կապուտաչուի*⁶. «...կանցնեն օրեր... եւ նա (բնութիւնը) *կապուտաչուի* շուշանները կը վերածի աղբի» (Հ. 147):

գ. Դերանուններ

Արեւելահայերէն նա, նրանք, այդտեղ, ինքնիրեն *բառերի հետ մեկտեղ հանդիպում ենք նաեւ* ան, անոնք, հոդ, ինքզինքն. «...իսկ ստեղծագործող է *ան*, ով..., իսկ արժեքներ ստեղծում է *ան*, ով ստեղծագործում է» (Հ. 521), «*Անոնք*, որ դէմ են Ամերիկայում տեղի ունեցած սեւ դէպքին, եւ *անոնք*, որ կ'արդարացնեն եղածը...» (ՆՆ. 34), «Եթէ Կոպերնիկը *հոդ* է, համբուրէ իմ կողմից: ...ֆանի Վահանը *հոդ* է ինձ գրիր յաճախ» (ՆՆ. 8, 17), «Մինչեւ որ հայ մարդը չկարողանայ *ինքզինքն* յաղթահարել... մի ժողովրդի, որ *ինքզինքն* դեռ չի նուաճել...» (ՆՆ. 63, 244):

դ. Բայեր

Արեւելահայերէն կորչի, գնալ, անել, լցնել, կորցնել, փաթաթվել, ֆնել *բայերի փոխարէն գործածուած են* անկցի, երթալ, կորսնցնել, պլլուել, ֆնանալ: *Ինչպէս. «Անկցի* սերը դէպի մերձաւորը, մենք պէտք է աստեմք... (Լուսաշարսկի)» (Հ. 622), «...նրան ֆանաչելու համար պէտք է *երթալ* նրա մօտ» (Հ. 590), «...աստիճանաբար պիտի *կորսնցնէր* իր հօգուտիւնը...» (Հ. 462), «...մագերի փոխարէն ...իրար *պլլուած* օճեր էին կրում» (Հ. 210), «...որոնք գիշերները *ֆնանալ* գիտեն...» (Հ. 181):

ե. Մակրայ

Աչքի է զարնում նորիցի *փոխարէն* նորէն *մակրայի յաճախակի գործածութիւնը*: «...կարգի բերելով իրենց շարքերը... նորէն ու նորէն յարակուում» (Հ. 411), «*Նորէն* երկրի հայութիւնը... սուգի մեջ: ...*նորէն* հազարաւոր որբեր...» (Հ. 448):

զ. Շաղկապ

Որովհետեւ *ից բացի հանդիպում է նաեւ* վասնզի. «...*վասնզի* որքան քնական ու ճիշտ է այս կամ այն նպատակի ընտրութիւնը...»

6 ԱՂԱՅԵԱՆ, Է., *Արդի հայերէնի քաղաքական քառարան*, 1, 1976, 895:

(Հ. 451), «...քեզ վայել չէ ցաւի մման արտայայտութիւնը, վասնզի դու մարդ ես, մարտիկ» (Հ. 368):

Արեւմտահայերէնի մի շարք գուտ հայեցի բառեր փոխարինում են արեւելահայերէնում գործածուող փոխառութիւններին, որպիսիք են՝ կուրտիզանուհի, նաւթ, ֆիմիա: Արեւմտահայերէն նոյնանիշներն են՝ պերնադիմ⁷, ֆարիւղ, տարբաքանութիւն:

Դրանով Նժդէհը թէ՛ մաքրում է արեւելահայերէնը, թէ՛ հարստացնում է իր խօսքը, եւ թէ՛ միախառնում երկու լեզուաճիւղերը: Ահա. «Աւստրիական բանաստեղծ Եակովն է պերնադիմը, որ Գարիբալդիին կոչած էր «դժոխքի ծնունդ»...» (Հ. 279), «...նրան տրուեց ֆարիւղ գնելու... շահաշատ պաշտօնը...» (Հ. 282), «...տարբաքանութեան, ...հրաշագործ յառաջադիմութեան մեր օրերում...» (Հ. 130):

3. Արեւելահայերէն բառեր՝ որոշ առումներով

Նժդէհի ստեղծագործութիւններում ներառուած են նաեւ արեւմտահայերէն այնպիսի բառեր, որոնք կան նաեւ արեւելահայերէնում: Սակայն որոշ իմաստներով համընկնելով՝ դրանք մէկ-երկու իմաստով տարբերում են արեւմտահայերէնում: Արեւելահայերէնում այդ տարբերիչ իմաստներն արտայայտելու համար գործածուած են նոյնանիշ ուրիշ բառեր:

Յիշատակենք ընդհանուր, բայց զանազան իմաստներով այդպիսի բառերի մի շարք:

Գետին. «Ժողովը որոշած էր նորահաս սերունդը կազմակերպել անկուսակցական գետնի վրայ...»⁸: Գետին բառի ներկայ իմաստի համար արեւելահայերէնում գործածուած է հիմք, հող բառերը: Բայց քանի որ Նժդէհը նամակը գրել է իր ամերիկահայ դաշնակցական ընկերներին, յարմար է տեսել նախադասութիւնը կառուցել արեւմտահայերէնի ոճով: Ցած. «...մարդկային ցած հոգու բոլոր հնարամտութիւնները...» (Հ. 211): Արեւելահայերէնում գործածուած է ստոր (ստոր հոգի): Փափուկ. «...պէտք էր ինձ համար Բալկանում առնուազն փափուկ դրութիւն ստեղծել, որպէսզի անկարելի դարձնեն ցեղակրօնութեան տարածումը... իմ ապրած երկրում: ...քիւրօն գիտէ, որ այս տեսակետից իմ... դրութիւնը փափուկ է» (Ազգ): Արեւելահայերէնում՝ նուրբ, նրբին: Հանել. «Էջմի-

7 Պերն եւ ադիմ (ադիկ) բառերից:

8 Ազգ, 12.02.2011: Այսուհետեւ շարադրանքում կը նշուի միայն (Ազգ):

ածինը... սովորութիւն ունէր յաճախ ամենադատարկ բանի համար իր պատուիրակը գաղութ *հանելու...*» (Հ. 222): *Արեւելահայերէն-նում*՝ ուղարկել:

4. Յարադրութիւններ

Նժդեհն արեւմտահայերէնից վերցրել է նաև կայուն բառակապակցութիւններ՝ յարադրութիւններ: Արեւելահայերէնում կամ դրանց բաղադրիչներն են փոփոխուած իրենց բառային տարբերակներով, կամ արեւմտահայերէն իմաստն արտայայտուում է արեւելահայերէն բոլորովին մի ուրիշ համադրական բառով: Ստորեւ բերուում է այդպիսի յարադրութիւնների շարքեր:

ա. Բայական յարադրութիւններ

Սրանք համեմատաբար աւելին են: Ծափ գարնել (արեւելահայերէնում՝ ծափ գարկել, ծափահարել, ծափ տալ). «...ծափ կը գարնէ եւ սրանց» (Հ. 440): Քայլեր առնել (ֆայլեր կատարել, միջոցներ ձեռնարկել). «...Ֆայլեր առէ՛ք վայրկեան առաջ... ...իրագել լինեմ ձեր առած ֆայլերին» (Ազգ): Ձեռք ձգել (ձեռք գցել, ձեռք բերել), «Անձնական... բարիքներ ձեռք ձգելու համար մա ...վնասներ հասցրեց հայ դատին» (Հ. 199): Աչքէ անցընել (աչքի անցկացնել). «Ընթերցողը կարող է գաղափար կազմել՝ աչքէ անցընելով ...խորհրդի յայտարարութիւնը...» (Հ. 318): Գլուխ ելլել (գլուխ հանել, գլուխ դնել). «Բուլղարը մեմակ չի կարող գլուխ ելլել սուլթանի հետ» (Հ. 175):

բ. Անուանական վերլուծական կազմութիւններից ցոյց տանք ածականական եւ դերանուանական մէկական կապակցական յարադրութիւն:

1) Ածականական յարադրութիւն: Վրան քաց (կատարուող մէջբերումներում նշանակում է քացայայտ). «Ահա՛ վրան քաց մի խոստովանութիւն այդ մասին. «Ռուսաստանը պէտք է ունենա մըշտական ու անմիջական կապ Տաեկաստանի հետ, որի ֆանապարհը Ջանգեգուրն է»... Թերթը վրան քաց կերպով կսպառնա ինձ...» (Հ. 175), «Վերջինները կսկսին այլեւս վրան քաց կերպով գործել շրջանիս դեմ» (Ազգ):

2) Դերանուանական յարադրութիւն: Ոչ մէկ (ոչմի). «...փրկութեան համար ոչ մէկ իրական նշանանակութիւն ունին» (Հ. 67):

5. Հոլովական ձևեր

Նժդեհի ստեղծագործութիւններում արեւմտահայերէնը ներկայանում է նաեւ իր քերականական ձեւերով եւ շատ աւելի յաճախ, քան բառային տարբերակներով ու բառերով: Նախ կանգ առնենք բառերի հոլովական ձեւերի վրայ: Այս եւ յաջորդ կետերում յետեւել ենք Աւետիսեանի «Արեւելահայերէնի և արեւմտահայերէնի գուգադրական փերականութիւն»⁹ աշխատութեան սկզբունքներին:

ա. Սեռական, տրական հոլովներ

Մի մեծ խումբ բառեր պատկանում են ու հոլովման, մինչդեռ նոյն բառերն արեւելահայերէնում ի հոլովման են՝ պահի, դարի, շահի: Գործածուած են պահու, դարու, շահու, ինչպէս յատուկ է արեւմտահայերէնին. «...իրեւնց դիրքերի վրայ՝ վտանգի պահում...» (Հ. 344), «...լուսաւորութեան դարու մարդը...» (Հ. 545), «...մղում անձնական շահու աստուածացման...» (Հ. 196): Երբեմն հանդիպում է գաղութահայու հոլովածեւը, բայց շատ աւելի՝ հայու, որ յաճախականութեամբ մրցակցում է հայի հոլովածեւի հետ. «...գաղութահայու ազգային քարոյականը...» (Հ. 650), «...տեսայ ամենաընտիրը հայու... ֆանաչեցի եւ ամենավատը հայու...» (Հ. 107), «...ծնունդը նոր հայու... ցեղաշունչ հայու...» (Հ. 177, 182): Բառախումբը ստուարանով է նրանով, որ գոյականները յոգնակի թւում եւս ընդունում են ու հոլովամասնիկը, իսկ արեւելահայերէնում՝ ի հոլովամասնիկը. ուխտերի, ժողովուրդների, հանդեսների, իրերի, արժեքների դիմաց գործածուած են ուխտերու, ժողովուրդներու, հանդեսներու, իրերու, արժեքներու. «...ցեղակրօն Ուխտերու որոշումները ... հնարաւորութիւն տալ բոլոր Ուխտերուն... Ժողովներու եւ հանդեսներու համար» (ՆՆ. 37-38), «...եթէ իրերու քերումով...» (Հ. 440), «...սկսել է չակերտել հայկական բոլոր արժեքներու սրբութիւնը...» (Հ. 194): Ահա նաեւ յօդուածի վերնագիր՝ «Ցեղակրօններուն» (Հ. 519):

Մէկ այլ խումբ գոյականներ արեւելահայերէնի ի հոլովման դիմաց գործածուած են արեւմտահայերէնի ու արտաքին հոլովմամբ: Սրանք տեղանուններ են՝ մեծագոյն մասը պետութիւնների անուանումներ՝ Անգլիոյ, Ասիոյ, Ռումանիոյ, Բուլղարիոյ, Իտալիոյ եւն. «Անգլիոյ կրունկը ծանրօրէն կըկոխեր ... ընդունելով Անգ-

⁹ ԱԻՆՏԻՍԵԱՆ, Յ., *Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի գուգադրական փերականութիւն*, ԵՊՀ, Երեւան 2007:

լիայ մանդատը» (Հ. 267), «Փոքր Ասիայ... ժողովուրդներից...» (Հ. 610), «...Իտալիայ և Գերմանիայ հետ բարեկամամալու համար» (Հ. 204), «...գրել Ռոմանիայ... կոմիտեին» (Հ. 15): «...Բուլղարիայ մեջ պահելու նպատակով...» (Ազգ): Երկերում նկատելի է Թուրքիա, Ռուսիա տեղանունների յաճախակի լինելը, ինչը ինքնին հասկանալի է, եթե նկատի ունենանք հեղինակի թեմատիկան, Հայաստանի, Ռուսաստանի եւ Թուրքիայի յարաբերութիւններին բազմաթիւ առիթներով անդրադառնալը. «Հայաստան երկիրը բաժանած մնայ Ռուսիայ եւ Թուրքիայ միջեւ» (Հ. 116), «...Թուրքիայ վախճանը... Թուրքիայ համար... Թուրքիայ պիտի պարտադրուէր...» (Հ. 267), «Վաղվայ Ռուսիայ սարսափից խթանած... ... օգտւելով Ռուսիայ ժամանակաւոր... խռովայոյզ վիճակից...» (Հ. 127):

Տարբեր հոլովումների պատկանելը մատնանշող մի վերջին մեծ խումբ բառեր՝ արտացոլուած երկերում, -ում ածանցով բայանուն գոյականներին են վերաբերում: Վերջիններս արեւմտահայերէնում ի հոլովման են, իսկ արեւելահայերէնում՝ մեծ մասամբ ա ներքին թեքման: Այդպիսիներից են՝ զգացման, մրցման, վերանորոգման, գնահատման, նուաստացման: Գործածուած են՝ զգացումի, մրցումի, վերանորոգումի, գնահատումի, նուաստացումի. «...զարգանում է... արժանապատուութեան զգացումի հետ...» (Հ. 29), «Գոյութիւն կունենայ մրցումի մի հատիկ ձեւ միայն...» (Հ. 88), «...իմքնանորոգումի ցամբով սատար հանդիսանալ հասարակութեան բարոյական վերանորոգումի...» (Հ. 92), «...հետեւանք է... սխալ գնահատումի» (Հ. 92), «...միշտ ենթակայ նուաստացումի...» (Հ. 102): Քանի որ երկու լեզուաճիւղերը խառն են գործածուած, այս դէպքում էլ բազմաթիւ նախադասութիւններում հանդիպում են նշուած կարգի տարբերութիւններով բառաձեւեր: Այլ օրինակներ. «...ենթակայ է... քննաջնջումի, ձուլումի» (Հ. 58), «...բուժումի մասին» (Հ. 58), «...պատկերումի աղբիւրը... պատճառը հուսալուծումի... սպառազինումի ահագանգը...» (Հ. 68):

բ. Տրական եւ ուղղական հոլովներ

Այս հոլովներում նկատելի է որոշեալ յօդի բացակայութիւնը, մի իրողութիւն, ինչը բնորոշ է արեւմտահայերէնին:

Ասուածը տրականում գրեթէ միշտ կապուած է գոյականների հետ, որ -ութիւն վերջածանցն ունին: Ինչպէս. «...կը սպառնար Հայաստանին եւ ամոր անկախութեան» (Հ. 275), «...նախապայմաններ է առաջարկել խորհրդային նշանաւորութեան...» (Հ. 318),

«...թողնելով իր միւթեղէն անօթը երկրին, ոգին՝ մարդկութեան» (Հ. 374), «...սեւիական պատմութեան անծանօթ լինելը» (Հ. 549), «...չէ մասնակցելու Մայիս 28ի տօնակատարութեան» (ՆՆ. 11): Արեւելահայերէնում՝ սպառնալ անկախութեանը, առաջարկել պատգամաւորութեանը, թողնելով... ոգին՝ մարդկութեանը, պատմութեանն անծանօթ լինելը, մասնակցել տօնակատարութեանը: Նոյնը նաեւ կարեւոր աշխատութիւններից մէկի վերնագրում՝ «Բաց մամակներ հայ մտաւորականութեան» (Հ. 53) // Բաց նամակներ հայ մտաւորականութեանը:

Ուղղական հոլովում երբեմն որոշեալ յօդ չեն ունենում ազգանունները կամ անձնանունները. «...Բիւրոյի ներկայացուցիչը՝ Ջամալեան, խորհուրդներ կուտայ... Տէր-Մինասեան, իբրեւ թէ մոռացել էր... » (Ազգ): Բայց նոյն նամակում քիչ վերը ուրիշ ազգանուն յօդով է. «Նաւասարդեանը կ'երթայ քննութեան»:

գ. Ներգոյական հոլով

Ներգոյականի հոլովական իմաստը Նժդէհը գործածում է տրական հոլովով ու մէջ կապով, ինչպէս ընդունուած է արեւմտահայերէնում՝ արեւելահայերէնի -ում քերականական վերջաւորութեան դիմաց: Ըստ որում, դէպքերի մեծ մասում տեղանուններ են՝ Գերմանիայում, Ամերիկայում, Դէտրոյտում, Բուլղարիայում ձեւերի փոխարէն հանդիպում են. «...Գերմանիայ մէջ...» (Հ. 547), «...կուգեմ կեղծել, որ Ամերիկայի մէջ... Թուրքիայ մէջ...» (ՆՆ. 25-27), « Իսկ Դեթրոյիթի մէջ գումարած... ժողովի առած մի քանի որոշումները... Բուլղարիայ մէջ ինձ դաւողները... » (Ազգ): Ապա նաեւ հայրենիքի մէջ (որը տեղանուն չէ), «...վերջ տանք՝ որբերին մեր հայրենիքի մէջ» (Հ. 57):

դ. Հայցական հոլով

Այս հոլովը հանդէս է գալիս արեւմտահայերէնին բնորոշ երկու իրողութեամբ. առաջինը, երբ անձի անունը լինելով ուղղիղ խնդիր, դրում է իրի առումով եւ որպէս բառի ուղղիղ ձեւ նմանում է ուղղական հոլովաձեւին: Հետեւեալ մէջբերումներում այս կերպ են զիմուրը, կիմը, մարդը, գործակալները, հակառակորդը գոյականները. «...գէմքերի հետ միաժամանակ, չի կատարելագործում նաեւ իր զիմուրը» (Հ. 558), «...յիշեցի հոռմեական զօրավար Անտոնիոսի կիմը... » (Հ. 210), «Ես տեսայ հոգւով ազատը և սիրեցի մարդը...» (Հ. 278), «...Ամերիկա է ուղարկել իր գործակալները...» (Ազգ), «...ձգտում է ահաբեկել իր հակառակորդը...» (Հ.

205): Արեւելահայերէնում անձ ցոյց տուող գոյականները դրոււմ են անձի առումով ու ձեւով նմանում են տրականին, այստեղ կարող էր լինել՝ կատարելագործել զինուորին, յիշել կնոջը, սիրել մարդուն, ուղարկել գործակալներին, ահաբեկել հակառակորդին: Նշուած լեզուական երեւոյթը շատ տարածուած է երկերում: Այլ օրինակներ. «Էջմիածինը չկարողացաւ Բուլղարիոյ... արքայիսկոպուսը պաշտպանել» (Հ. 222), «...մի քանի խօսքով օրհնեց մեր զօրքը» (Հ. 564), «...արնոտ փորձերով եւ քանաչել իմ ժողովուրդը...» (Հ. 540), «Օտար լուծերի ազդեցութիւնը հայմ զգալիօրէն խորթացրել է իր էութիւնից...» (Հ. 638), «...ես տեսայ ստրուկ մ ազատութեան մէջ...» (Հ. 275): Հարկ է յաւելել, որ իրողութիւնը տարածուած է նաեւ յատուկ անունների վրայ: Ինչպէս. «...յիշեցի հոռմէական գօրավար Անտոնիոսի կինը՝ Ֆուլվիան» (Հ. 210), «Յիշեցի շեքսպիրեան տիպերից լեյդի Մակբետը...» (Հ. 210): Ես եւ ընտրել Ռուբենը... Ռուբենի մոր չէ, որ քանաչում եմ» (ՆՆ. 41) (խառն գործածութեան բնորոշ օրինակ է):

Երկրորդ իրողութիւնն առնչուած է գ նախդիրի հետ, որ ներկայ երկերում դրոււմ է այն, իրար, իմքը, բայց աւելի շատ անոնք դերանուններից առաջ, ուղիղ խնդրի դէպքում՝ զայն, զիրար, զիմքը, զանոնք. «...կուգէ հարուածել զայն Ամերիկայի մէջ» (ՆՆ. 13), «...տրամագծօրէն հակառակ, զիրար ժխտող ըմբռնումներ են» (Հ. 216), «Այս քամքով կարելի պիտի լինի փրկել զիմքը, ...ես զայն ծառայեցնել Հայաստանին» (ՆՆ. 29), «Մեր կեանքի մերժին կնքիւնները գտնել, լուսաբանել զանոնք... ...զանոնք մեր քաղաքական ձգտումների համընթաց դարձնելու...» (Հ. 67), «...իր հոգու անբաւ հարստութիւնները... զանոնք փռում աշխարհի առջեւ» (Հ. 485): Այսպէս, հայցական հոլովի գ նախդիրով դերանունական բառաձեւերը, որոնք յիշեցնում են գրաբարի քերականութիւնը, գործածուած են արեւմտահայերէնում: Այդ կերպ Նժդէհը ներկայացնում է գրաբար, արեւմտահայերէն, արեւելահայերէն եռամիասնութիւնը՝ նախադասութիւնները կառուցելիս նշուած երեքին էլ դիմելով:

ե. Բացառական հոլով

Արեւմտահայերէնի հոլովաձեւերից ոչ մէկն այնքան շատ չի գործածուած, որքան բացառականը: Արեւմտահայերէն բացառականով են գրուած ամբողջական գործեր, ինչպիսիք են 1938ին ամերիկահայ դաշնակցական ընկերներին ուղղուած ծալալուն նամակը (Ազգ), «Բաց մամակ Մայքլ Առլենին» (Հ. 461)

հրապարակախօսական յօդուածը: Ահա եւ աշխատութեան վերնագիր՝ «Եջեր իմ օրագրեն» (Հ. 21): Արեւելահայերէնի -ից, -ուց վերջաւորութիւնների փոխարէն բացառականում հանդէս է գալիս անորոշ առումով -է, որչեալ առումով՝ -էն վերջաւորութիւնները: Օրինակներ. «Մէկէ աւելի կեանք եւ մէկէ աւելի մահ...» (Հ. 148), «...տարիներէ ի վեր կորովաթափ կը լինեն...» (Հ. 128), «...ի՞նչ անել, որ դադարի մի խումբ մարդկանց հարստութիւնը լինելէ» (Ազգ): Ապա նաեւ. «Իմ... գրքերէն, իմ յօդուածներէն, իմ արտասանած խօսքերէն...» (Հ. 537), «Նորահաս սերունդը կտրուե՞ց... անցած սերունդներէն... կտրուում է ցեղի արժէքներէն ու սրբութիւններէն, կրօնէն ու բարոյականէն» (Հ. 242): Հետեւեալ նախադասութեան մէջ միատեղ են արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի բացառականի -ից||-էն վերջաւորութիւններով բառաձեւեր. «...այդ ըմբռնումն է մեզ էջել տալիս պատմութեան առջեւից կամ նրա յետեւէն» (Հ. 231):

Յիշատակենք նաեւ յատուկ անունների հոլովաձեւեր. «...Ասիայէն խուժած բարբարոսը...» (Հ. 152), «...Լոգանէն յետոյ...» (Հ. 513), «Այդ սպասելի չէր տիկին Սիրամուշէն...» (ՆՆ. 33), «...հեռու Սպարտայէն...» (Հ. 519):

Որոշ բառաձեւերում առկա է ս, ուրիշներում՝ դ յօդը. «...խղմատանքէ՛ս գատ... երկու գերագոյն դատաւորներ եւս...» (Հ. 656), «...Եգիպտոս այցելելէս յետոյ...» (ՆՆ. 33), «...չես խուսափի հարագատ ցեղէ՛դ» (Հ. 612), «Աշխատիր, որ փառքդ... ընթանայ յետեւէ՛դ» (Հ. 364):

գ. Գործիական հոլով

Թէեւ -ով վերջաւորութիւնը արեւելահայերէնում եւ արեւմտահայերէնում ընդհանրական է, բայց գործածուած են մի քանի բառաձեւեր, որոնց հնչիւնակազմերում ի յայտ են գալիս տարբերութիւններ, քանի որ հոլովական վերջաւորութիւններից առաջ առկայ են տարբերիչ հնչիւններ: Հոգի՝ հոգով, բայց արեւմտահայերէնում հոգւով, որոնց՝ որոնցով, արեւմտահայերէնում որոնցմով. «Արիւնն ու արցունքը պիտի չդադարի, ...մինչեւ... չհօգրանայ հոգւով» (Հ. 89), «Այդպիսին մշտաշահել է հոգւով» (Հ. 168), «...հշմարտութիւններ, ...որոնցմով այնքան ուժեղ են եւրոպական ժողովուրդները... գերագոյն ոյժեր, որոնցմով այնքան աղքատ է մեր կեանքը» (Հ. 445):

Անհամեմատ շատ են -ալ վերջաւորութեամբ բառաձեւերը՝ արեւելահայերէնի -ովի դիմաց: Պայմանով/պայմանաւ. «...պայմա-

նաւ, որ ժամանակը տկարացրած չլինի սէրը, կարօտը դէպի հայրենի Երկիրը» (Հ. 90), «...պայմանաւ, որ ... ցիգ անէր ազատուելու... քշմամիների ազդեցութիւնից» (Հ. 58): Այստեղ աչքի է զարնում միջոցաւ բառաձեւը, որ հանդիպում է բազմաթիւ անգամ. խիստ սակաւ դէպքերում է լինում միջոցով, ինչպէս արեւելահայերէնում է: Այսպիսի նախապատուութիւն չի տրուած թերեւս ոչ մի այլ բառաձեւի: Արեւելահայերէնի որոշ բառաձեւեր յաճախականութեամբ գերազանցում են, իսկ ուրիշները՝ զիջում, ինչպէս այստեղ. «...իր մարդկանց միջոցաւ դաւեց...» (ՆՆ. 7), «Սատանայի իր գործը կատարում է «սուրբ» միջոցաւ» (ՆՆ. 32), «...բողոքը ընդհանուր ժողովիմ յղել սրա միջոցաւ» (ՆՆ. 32), «Այդ նշմարտութիւնը... իրենց շարքերի միջոցաւ պիտի ներշնչեն...» (Հ. 71):

Հոլովաձեւերում աչքի ընկնող իրողութիւն է որոշեալ յօդի գործածութիւնը առաւել յաճախ սեռականի, տրականի, պական յաճախ գործիականի, ներգոյականի այն բառաձեւերում, որոնցում արեւելահայերէնում յօդն ընդունուած է: Խօսքը սեռականում պատկանելութեան, սերման հետ կապուած, իսկ տրականում կապերի գործածութեան դէպքերի մասին է: Գործիականում ու ներգոյականում գրական արեւելահայերէնում ընդհանրապէս յօդեր չեն լինում: Կատարենք համապատասխան մէջբերումներ. «Նա գաւակն էր... մեծ սրտի տէր ժողովուրդիմ» (Հ. 591), «Ստացած մարմնիմ մի գրութիւնը» (Ազգ), «Առանց այդ պայմարիմ չի կարող ստեղծուիլ կատարելութիւն...» (Հ. 453), «... առանց որիմ դաշնակցութեան դեկավարութիւնը չէ կարող...» (Ազգ), «Նա հիւանում է գեղեցիկիմ, վսեմիմ զօրեղութեան վրայ...» (Հ. 454), «Շնորհիւ Տաթևի ոյժերի մի նոր սխալիմ...»¹⁰: Ինչպէս նաեւ. «...անգիղջ վատերի սեւ գործերովմ է շնչել...» (Հ. 119), «...չի կարելի բացատրել իր տգիտութեամբը միայն» (Հ. 84), «...յանձնարարում է ապացուցանել, թէ՛ մեր դժբախտ հայրենիքումմ էլ մարդիկ հաց են ուտում» (Հ. 207):

6. Բայանուններ

Արեւմտահայերէնում բայաձեւերը նոյնպէս գործածւում են առատօրէն (թերեւս աւելի առատօրէն, քան հոլովական բառաձեւերը), միախառն արեւելահայերէնի բայաձեւերի հետ՝ կամ վերջիններիս յաջորդող նախադասութիւնների մէջ, կամ համա-

10 Հայրենիք, ԹԻՎ 12, 1923:

տեղ՝ մէկ նախադասութեան մէջ: Առկայ են արեւմտահայերէնին բնորոշ խոնարհումները, առաւել մեծ յաճախականութեամբ՝ ի խոնարհումը: Նախ կը բերուեն օրինակներ այս խոնարհումով. «Ես էլ պիտ թառմի՛մ, ես էլ պիտ մեռնի՛մ», - ասեց ծաղիկը...»¹¹, «...ապրիլ, գործիլ և մեռնիլ որպէս ցեղակրօն» (Հ. 513), «Զսարսափիմք, բայց եւ ընդունիմք այդ ճշմարտութիւնը» (Հ. 58), «...իբրաւումն ունիմ այսպէս վարուելու: ...ստեղծագործելու պարտականութիւն ունիմ...» (Հ. 64): Կան կրաւորական վ, ու(ւ) (արտասանութեամբ վ) ածանցով բայեր, ինչպէս նայեւ բայեր, որոնք, չունենալով յիշեալ ածանցը, արտայայտում են կրաւորական իմաստ: Ինչպէս. «Հայաստանի ստեղծուիլը, ... կորուստները...» (Հ. 54), «Պետք է այս մտայնութիւնից ազատուիմ» (Հ. 61), «Ծարժիլ կըսկսիմ... գրիչներ, կը բացւիմ աչքերը...» (Հ. 88): Ապա նաեւ. «...այդ պայքարէն կը ծնի ՆՈՐ ՀԱՅԸ» (Հ. 184), «...չմամիմք յոռետեսիմ...» (Հ. 500), «...իմն համար ամենաբարձր արարքը՝ հնազանդիլն է գեղիս» (Հ. 513): Արեւելահայերէնում՝ կծմուի, չմամուենք, հնազանդուել:

Ու խոնարհումից գործածուած է կ'երդնում բայը: Յիշատակենք երկու դէպք, մէկը՝ «Ամերիկահայութիւնը եւ ցեղի տակամբը աշխատութեան մէջ. «...կ'երդնում վահագնի աջի վրայ...» (Հ. 246), միւսը՝ «Ցեղի արթնութիւնը» յօդուածում. «...ես ահա... կ'երդնում վահագնի աջի վրայ...» (Հ. 513):

Արեւմտահայերէն գործածուած բայերից երկուսը՝ թուիլ, ժպտիլ ի խոնարհման է, իսկ արեւելահայերէնում դրանք պատկանում են ա խոնարհման՝ թուալ, ժպտալ. «Այն ամենը, որ երեկ կը թուէր անորոշ, միջին ու անորամաքանական...» (Հ. 562), «...ժպտիլ գիտէ մակատամարտի բոցերի մէջ... ... որ ամմեռ հոգիդ ժպտի մաւ մեր երկմի տակ» (Հ. 598):

Դիմաւոր բայերից ակնյայտօրէն աչքի է զարնում կը եղանակիչով բայածեւերի յաճախականութիւնը՝ ներկայ եւ անցեալ անկատար ժամանակներում: Որոշ հատուածներում դրանք այնքան շատ են, որ պէտք է արեւելահայերէնի -ում վերջաւորութեամբ եւ օժանդակ բայով կազմութիւններ փնտռել: Ահա Որդիների պայքարը հայրերի դէմ՝ աշխատութեան սկզբնամասը. «...կը ցուցադրեն մահուան դատապատուածի հոգեբանութիւն: ...կ'ուզեն եւ անկախ հայրենիք ունենալ, բայց մախապատրաստուելու փոխարէն կը խօսեն ու կը գրեն միայն: Կը շարունակեն զարմանալ, թէ

11 ՆԺԴԵՀ, Գ., Գրական երկեր, Երևան 2003, 32:

իմչու աշխարհն անտարբեր *կը մնայ*. սպեղանու *կը սպասենք*, բայց նորանոր վերքեր *կը ստանանք»* (Հ. 76): *Այսպէս է նաեւ «Նորայայտ մամակներ»-ում: Կատարենք առանձին մէջբերումներ. «...կը դաւէ... իմ դէմ - կ'աշխատէ... դժուարացնել... կ'ուզէ հարուածել զայն...» (ՆՆ. 13), «...մեր փարոգած դաշնակցութեան կը մոտենայ նորահաս սերունդը, իսկ միւսների փազոգածէն՝ կը խորշի, կը փախչի» (ՆՆ. 20):*

Արեւմտահայերէնի այս կարգի կազմութիւնները հանդիպում են նաեւ պաշտօնական գրութիւններում: 1921ի մայիսի 20ին կառավարութեան նախագահ Սիմոն Վրացեանին գրած նամակից. «Կառավարութիւնը... անհրաժեշտ կը նկատէ յայտնելու Զեզ, որ նա եւս կարեւոր կը դատէ մի լեզու գտնել հայ եւ թուրք վեհի շուրջ»:

Բաւել բայը արեւելահայերէնում արտայայտում է բաւական լինել յարադրութեամբ եւ բաւականացնել նոյնանիչներով. «Կը քաւէ, ամփոփենք մեր խօսքը» (Հ. 208), «...կը քաւէ, որ օտարը աւելի զօրաւոր լինի...» (Հ. 39):

Հարկ է առանձին յիշատակել տալ եւ գալ բայերը, քանի որ եղանակիչն է կու «...սերունդին կուտայ սխալ դաստիարակութիւն» (Հ. 492), «...ծնունդ կուտայ ներքին կուսակցական թնկուկներին» (ՆՆ. 35), «...շուտով հերթը կուգայ անունին...» (Հ. 39):

*Երկերի այլեւայլ հատուածներում քննուող ժամանակների արեւելահայերէն եւ արեւմտահայերէն կազմութիւնները հանդիպում են ոչ թէ կուտակումներով, այլ փոխնիփոխ՝ տարբեր նախադասութիւններում կամ յաջորդաբար մէկ նախադասութեան մէջ: «Ինչո՞ւ տարօնականութիւն» յօդուածում նախ կարդում ենք. «Ինչո՞ւ ուխտաժողովին կը փարոգեն - այդ մասին հարցրէ՛ք այն բոլորին..., որոնք... փակատ փակատի են եկած թշնամու դէմ» (Հ. 540): *Մէկ-երկու տող անց. «...վերջինները նետում են իրենց դիմակը: ...արնոտ փորձով եմ ճանաչում...» (Հ. 540): «Հայու ճամբան. մեծ գղջումի ճամբան» յօդուածում թուարկումներ են ըստ կետերի: ա) և բ) կետերում արեւելահայ կազմութիւններ են, իսկ գ) կետում՝ արեւմտահայ. «ա) ... երբ իրենց վիճակում է ապրել անմաւառ աշխարհագրական միջավայրում. բ) ... կորցնում են բնականոն գոյութեան կարելիութիւնը. գ) երբ իրենց վտանգ կը սպառնան... հօգօր... օտար հարեւանները...» (Հ. 618):**

Կը եղանակիչի հետ, բնականաբար, հանդէս է գալիս եզակի երրորդ դէմքի արեւմտահայերէնին բնորոշ -է բայական վերջաւորութիւնը: Քանի որ այդպիսի բայաձեւերը առանց կը եղանակիչի վերաբերում են նաեւ ըղձական ապառնի եւ հարկադրական ապառնի ժամանակներին, ուստի առաջանում է մի տարբերութիւն եւս արեւելահայերէնից, որտեղ գրաբարից ժառանգած -է դիմային վերջաւորութիւնը հնչիւնափոխուել է իի: Մէջբերումներ ներկայ ժամանակի բայաձեւերով. «...կ'ազնուացնէ, կը թեւաւորէ, կը գօտեւանէ... հոգիները..., վախը... կ'ենթարկէ, կը հպատակեցնէ, կը ստրկացնէ, կը լծէ իր կառքին» (Հ. 447): Այժմ մէջբերումներ ըղձական ապառնի ժամանակի բայաձեւերով. «...թողնեմ, որ այդ մարդը... մերկացնէ ու դատէ իր անձը» (Հ. 289), «Արդար է, որ մեր կեանքում օրէնսդրէ եւ առաջնորդէ ցեղը...» (Հ. 489), «...թող այդ չսարսափեցնէ, այլ զգաստացնէ, խրատէ մեզ» (Հ. 455): Եւ հարկադրական ապառնի բայաձեւերով մէջբերումներ. «...պիտի չխախտէ իր ստեղծած օրէնքները» (Հ. 510), «...դա մեզ միայն սարսափի պիտի մատնէ եւ ոչ ցնցէ» (Հ. 58), «...այս բարձունքների վրայ պէտք է կռուէ, մեռնէ ու յաղթէ վաղուայ հայութիւնը» (Հ. 166): Այժմ հարկ է կատարել այնպիսի մէջբերումներ, որտեղ խառն, յաջորդաբար հանդէս են գալիս երկու լեզուաճիւղերին բնորոշ տարբերեղանակների երրորդ դէմքի եզակի բայաձեւերը՝ մե'րթ -է, մե'րթ -ի վերջաւորութիւններով. «...կուսակցութեան ուշադրութիւնը կը գրադեցնէ նրանցով եւ վարպետօրէն կը փրկի իր պաշը» (ՆՆ. 35), «...հրապարակախօսութիւն, որ... ակտանշէ մեր ցեղին հոգերը եւ արմատական միջոցներ առաջարկի, որ վերագնահատումի ենթարկէ մեր անցեալը եւ նոր հիմնարկութիւններ որոնէ, որ լուսաբանի մեր ժողովրդի կեանքները, որ կռահի ... վտանգը...» (Հ. 68): Վերը նշուեց, որ կը եղանակիչով կազմուած է նաեւ արեւմտահայերէնի անցեալ անկատար ժամանակը: Դրան նոյնպէս բազմաթիւ դէպքերում դիմել է Գարեգին Նժդեհը. «...եթէ մտաւ մէջ կ'ըսէի...» (ՆՆ. 12), «...կը գալարէին... օձի մամ: ... իրենց պատժած կը համարէին: ...ցեղակոծութեան ակիւն կը բարձրանար ու կըսպառնար հեղեղել մեր ... գաղութները» (ՆՆ. 13), «...հարցրին, երբ ոտքի վրայ էինք եւ կ'ողջագոյրուէինք բաժանուելու համար» (Հ. 264):

Գալ բայի դէպքում կու եղանակիչն է, ինչպէս ներկայ ժամանակի դէպքում. «...մայրս ինձ... այցի կուգար ոտքով...» (Հ. 371): Դաշնակցական ընկերներին գրած նամակից բերուող հետեւեալ հատուածում կը բերէր, կ'ուղարկէր բայերը դրուած են պայմա-

նական անցեալ ժամանակով, ինչպէս արեւելահայերէնում, իսկ կը հրաւիրէին բայաճեւը սահմանական անցեալ անկատար ժամանակով, ինչպէս արեւմտահայերէնում. «Բիւրօն գիտէր, որ ես դաւադրուած եմ: Եթէ իր հաշիւն գար այդ բանը, նա ինձ դուրս կը բերէր այդ շրջանէն, կ'ուղարկէր մի այլ երկիր, գիտէր, թէ մեր բոլոր գաղութները կը հրաւիրէին ինձ...» (Ազգ):

Ներկայացուած է սահմանական եղանակի ժխտական ներկան, որտեղ դերբայները, խոնարհումներին համապատասխան, ունեն -եր, -իր, -ար վերջաւորութիւնները՝ չուգեր, համարեր, պաշտվիր, մեռնիր, տեկար, մնար. «Այսպէս չուգեր ապրիլ նորահաս սերունդը» (Հ. 513), «...անդարձ պանդխտութիւն չեմ համարէր տարագրի կեանքս» (Հ. 514), «...հայրենիք չի պաշտուիր եւ նրա համար չեն մեռնիր...» (ՆՆ. 18), «...չի տեկար աւելի գերագոյն մակատագիր...» (Հ. 183), «...հայրենիք երկար չի մնար օտարների ձեռքին...» (Հ. 115): Ապա նաեւ. «...չապրեցներ...» (ՆՆ. 18), «...չի նպաստէր, ...չի սնուցանէր, ...չեն ձեռնարկէր, ...չեն դարձներ...» (Հ. 91, 146, 181, 183):

Շատ յաճախ գործածուած են յարակատար ներկայ եւ յարակատար անցեալ ժամանակները, որոնց դիմաց արեւելահայերէնում ընդունուած են վաղակատար ներկայ եւ վաղակատար անցեալ ժամանակները: Ինչպէս. դիմած եմ, խնդրած եմ, դատած ե, պատժած եր, փախած եր, բայց՝ դիմել եմ, խնդրել եմ, դատել ե, պատժել եր, փախել եր. «Մի գրութեամբ դիմած եմ վարչութեան եւ խնդրած, որ...» (ՆՆ. 16), «Ուրացողներ կան, որոնց ժամանակին դատած է եղիշէն» (Հ. 275), «...որի խորամանկութիւնը մի արդար մտրակով պատժած էր Անդրանիկ» (Հ. 281), «...թագաւորը փախած էր Նեապոլից» (Հ. 279): Յաջորդ մէջբերումներում երկու լեզուաճիւղերի նշուած իրողութիւնները հեռու չեն միմեանցից. «...հայրութիւնը վնոած է այլեւս չմնալ... որպէս խաղալիք...» (Հ. 89): Քիչ անց. «...եւ ահա գործի է դրել իր ցեղային համաբը...» (Հ. 89):

Այժմ ժխտական խոնարհումներով մէջբերումներ: Զէ շիջած, գտած չէ, գրած չէ, չեմ տուած, չեմ մասնակցած, բայց՝ չի շիջել, չի գտել, չի գրել, չեմ տուել, չեմ մասնակցել. «Զէ, չէ, Մասիսը՝ հայոց ցեղայնութեան հրաբուխը, դեռ չէ շիջած» (Հ. 489), «Նա դեռ գրտած չէ իր ներքին կռուանը...» (Հ. 491), «...ցայսօր մի հատիկ տող գրած չէ ցեղակիցն դաւանամքի մասին» (Ազգ), «...ոչ միայն որեւէ սպանութիւն կատարելու հրահանգ չեմ տուած, այլեւ առհասարակ դատական գործերին ամենեւին չեմ մասնակցած»¹²:

12 Գարեգին Նժդեհի հարցախոնարհումները, Դատական գործ թիւ 321-339:

7. Պատճառական բայեր

Հանդիպում են թէ՛ սահմանական, թէ՛ հրամայական եղանակների խոնարհական ձևերի մէջ՝ արթնցուց, ջերմացուց, դիրացուց, անմահացուց, փաղցրացուց, պետականացուցին, արեւելահայերէնի արթնացրեց, ջերմացրեց, դիրացրեց, անմահացրեց, փաղցրացրեց, պետականացրին բայաձևերի դիմաց. «...եւ նրա մէջ արթնցուց... ցեղը...» (Հ. 149), «Հայ այրուբները լուսավորեց եւ ջերմացուց մեր որբերի կեանքը...» (Հ. 496), «...մեծապէս դիրացուց Հայաստանի անկումը եւ բաժանումը...» (Հ. 61), «Բոլշեւիկները պետականացուցին եկեղեցիներ...» (Հ. 214), «...անմահացուց հայ վրիժակը... օրհնեց ու փաղցրացուց մահը հերոսներին...» (Հ. 99): Ահա նաեւ պատճառական հրամայականի բայաձևեր. աւելցուր, կանգնեցուր, հանգչեցուր, միացուր, բարձրացուցէ՛ք, արեւելահայերէնի աւելացրու, կանգնեցրու, հանգչեցրու, միացրու, բարձրացրե՛ք ձևերի դիմաց. «Կանգնեցուր հանդիպած ամէն մէկին...» (Հ. 360), «Այդ յատկութիւններին աւելցուր ամենէն անհրաժեշտը՝ արիութիւնը...» (ՆՆ. 18), «Ծաղիկ կեանքս գոհի սեղան քարճացուցէ՛ք» (Հ. 436), «...յաւերժութեան կրծքին հանգչեցուր յոգնած գլուխդ» (Հ. 376), «Անհատ ոյժերդ միացու՛ր արիւնակիցներդ ոյժերին...» (Հ. 645):

ը. Ժխտումը նախադասութիւններում

Քանի որ արեւմտահայերէնում ժխտական դերանունն հետ չի դրուում ժխտական խոնարհման օժանդակ բայ, որեւէ ժխտական դիմաւոր կամ անդէմ բայաձեւ, այդպէս էլ հեղինակը գործածել է ոչինչ, ոչ ոք, ոչ մէկը դերանունները, այսինքն յաճախ հետեւելով արեւելահայերէնի քերականութեան մէջ ընդունուած, այսպէս ասած, կրկնակի ժխտումին: Ըստ որում, ժամանակները կազմուում են մե՛րթ կը եղանակիչով, եւ որ հետաքրքիր է, մե՛րթ անկատար դերբայով, ինչպէս գրական արեւելահայերէնում. «Ոչինչ ուներ Սիւնիքը... կոնի վարելու համար...» (Հ. 163) (փոխանակ՝ ոչինչ չուներ), «Ոչինչ կը խնայէ գաւեշտի վերածելու մեր ողբերգութիւնը...» (Հ. 174) (ոչինչ չի խնայում), «Ոչինչ է ուզում աշխարհից...» (Հ. 495) (ոչինչ չի ուզում): Ապա նաեւ. «Ինձնից գատ իմ ոյժէն, իմ հացէն ո՛չ ոք իրաւունք ունի օգտուելու...» (Հ. 583) (ոչ ոք իրաւունք չունի), «Ծանօթ, բարեկամ, ազգական – ոչ ոք իր դուռը կը քանայ առջեւդ...» (Հ. 433) (ոչ ոք ... չի բացի), «Անարի ժողովրդի հետ ոչ ոք է կապում... իր նակատագիրը...» (Հ. 41) (ոչ ոք չի կապում...), «...Այլեւս ոչ ոք է հաւատում...» (Հ. 55) (ոչ ոք չի հաւատում): Եւ կամ. «Ժողովուրդներից եւ ոչ մէկն է առանձին բացարձակօրէն ու-

Ժեղ... եւ ոչ մէկն է նոյն ձեւով ամենաթոյլը...» (Հ. 113) (ոչ մէկն ուժեղ չէ... ոչ մէկն ամենաթոյլը չէ):

Ասուածով չի սահմանափակուում հոլովածեւերին ու բայածեւերին վերաբերող նիւթը: Կարելի էր անդրադառնալ նաեւ որոշ այլ հոլովածեւերի, հրամայական եւ անցեալ կատարեալի բայածեւերի եւ ուրիշ քերականական տարրերի, որոնք անհամեմատ քիչ են գործածուած: Այստեղ անհրաժեշտ համարուեց ծանրանալ շատ աւելի լայն գործածութիւն ունեցող քերականական տարբերութիւններին, ինչը բաւական էր հեղինակի՝ երկու ճիւղերին դիմելու լեզուական իրողութիւնն ի ցոյց դնելու համար:

Եւ այսպէս. Գարեգին Նժդեհն արեւելահայերէնի հետ միատեղ գործածում է նաեւ արեւմտահայերէնը՝ միեւնոյն մէկ նախադասութեան մէջ կամ յաջորդական նախադասութիւններում՝ ներառելով մէկ այս մէկ այն լեզուաճիւղի բառերը, բառային տարբերակները, քերականական տարրերը: Այս միտումն անցնում է նրա ամբողջ գրական ժառանգութեան միջով: Միաժամանակ հարկ է աւել (ինչպէս յիշատակեցինք յօդուածի սկզբում), որ որոշ ստեղծագործութիւնների հատուածներ գրուած են զուտ արեւմտահայերէնով: Այսպիսիք են՝ «Ցեղի ոգու շարժը» աշխատութեան «Իմ դաւամամբը» ենթագլուխը (Հ. 156-158), «Զօրավար Գարեգին Նժդեհը Տարօրինակութեամբ մասին» յօդուածը (Հ. 552), բարեկամներին (օրինակ՝ Յովհաննէս Յովհաննիսեանին ուղարկած նամակների առանձին մասեր) (ՆՆ): Աւելին. քիչ չեն այն երկերը, որոնք ամբողջովին գրուած են միայն արեւմտահայերէնով՝ «Քաց մամակ Մայիլ Արլէնին» (Հ. 461-473) (այստեղ կարելի է հանդիպել անկատար դերբայով ժամանակային միայն մի քանի բայածեւերի արեւելահայերէնով), դաշնակցական ընկերներին գրած ծաւալուն նամակը (Ազգ): Շատ են բանաստեղծութիւնները, յատկապէս որոնք գրուած են Արեւմտահայաստանում կուռելու ժամանակաշրջանում՝ «Հրթիռ», «Հիասքալիում», «Կարնոյ աւերակներու մէջ», «Նամակ Կարսի Ռազմիկ Բերթին», «Մօրս», «Եղբօրս», «Քօմֆերամսին առջեւ...» եւ ուրիշներ՝ պատերազմական տպաւորութիւններով ու մտահոգութիւններով Արեւմտեան Հայաստանի ճակատագրի վերաբերեալ: Ահա նաեւ նոյն ժամանակաշրջանի քնարական արձակ բանաստեղծութիւն՝ «Անկերմագիր»¹³: Ստորեւ զետեղում ենք «Մօրս», «Եղբօրս», «Քօմֆերամսին

13 Նժդեհ, Գ., Գրական երկեր, Երևան 2012, 104-125:

առջեւ.....» արձակ բանաստեղծութիւններից հատուածներ՝ հնարաւորութիւն տալով ընթերցողին անմիջականորէն ծանօթանալու Նժդէհի՝ արեւմտահայերէնով ստեղծագործելու արուեստին.

«Գերեզմանն իսկ, հեզմող տանջամփիդ վեհութեան առջեւ, արիւմաբամ սիրտս դրի... Երջանկութիւնը տառապանքին, զրկանքին ու նեղութեան մէջ փնտռող հոգիէդ սուրեցայ, դժբաղդներուն մտերմանալ ու անոնց վշտի զգացումները քիմայոյզօրէն ապրեցայ...

Ո՛չ մի համնար բեզ չափ հրամայականօրէն չի կրցաւ մարդն ու մարդկութիւնը, պարտքն ու պարտականութիւնը ճանչցնել: Կը խոնարհիմ մեծութեանդ առջեւ, ինչպէս բուրմերը չաստուածին»:



«Տեսայ և մօտեցայ մեր հայրենի տան պարիսպներու առջեւէն մեղմիկ գարնան զով գիշերներուն սրսփալով անցնող առուակին մեղկութիւնը...

Մոռցա՛յ մեր թեթեւ, անվիշտ, անփուշ եւ անխարդախ կեանքի բոլոր ժպիտները ծաղկող... մեր գեղջուկի տունը, ուր ամէն ինչ պարզ, գեղեցիկ ու բնական էր, մեր սեղանը փայտեայ, մեր ամանը հողէ ու այն այգին, որուն երփներանգ խաղողի ողկոյզներուն հետ մեր մանկութիւնը խաղաց:

Այո՛ և մոռցայ այն հողը, ուրտեղ մեր ծնողքն իրենց բրտիմքով յոյսեր ծլեցուցին, ուրտեղ հերկի ախօսներուն մէջ մեր ապագայ երջանկութիւնը կերտել ձգտեցան: Ի փոխարէն կաթիլ մ'արցունք չունեցան իրենց անշիքիմ ոսկորները....

Թող ներէ ինձ ծանօթն ու անծանօթը, անհունն ու հիւլէն, ես զանոնք սարսափի ցասումի օրերուն մոռցայ: Ես մոռցայ, երբ արհաւիրք ու խաւար, հալածանք ու զուլում սկսաւ»:



«Տեսէ՛ք նայուածքներուս խորը, եւ այնտեղ անվեհերօրէն հոգիիս վնասականութիւն պիտի կարդաք բարձրաբարբառ: Այս առաւօտ կանուխ ասպնջականօրէն, արդարօրէն և եղբայրօրէն բոլոր պանդուխտներուն, ցաւոտ հոգիներուն և արդարութեան մարտիկներուն դուռը կը բախեմ, երբ միւս կողմ շատեր յաղթանակէն հիաստանջացած բունով կը յափրանան:

Մախադիս մեջ գոյումի գրեր ունիմ բոլոր հիմ դիւանագետներէն և քաղաքական վարդապետներէն, որոնք լուծալիմ համար այնքան արդար և անշահախնդիր ազգիս սուրբ իրաւունքները զգետնեցիմ»¹⁴:

Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի մէկտեղումը, դասական ուղղադրութեամբ գրելը Գարեգին Նժդեհը ծրագրային էր համարում: Եթէ գրաբարին դիմելով՝ մեր հնացած բառերի ու քերականական տարրերի գործածութեամբ նա ձգտում էր վաղնջական ու ժամանակակից սերունդների պատմական կապին, ապա երկու լեզուաճիւղերի համատեղ գործածութեամբ՝ մեր ժողովրդի երկու հատուածների միասնականացման: Դա գաղափարախօսական պայքար էր ազգային հատուածականութեան ամէն կարգի դրսեւորումների դէմ:

Երեւանի «Արխիվայիմ գործի գործակալութիւնը հրատարակչութիւն»ը շնորհակալ գործ է կատարել 2002ին՝ տպագրելով Գարեգին Նժդեհի երկերի երկհատօրեակը: Սակայն պէտք է ընդգծել, որ հրատարակութիւնը կատարուել է վճռականօրէն սխալ սկզբունքով: Գրէթէ բոլոր հնացած բառերն ու քերականական տարրերը փոխարինուած են մեր օրերի նոյնանիշներով: Համապատասխանաբար ամենուրէք արեւմտահայերէնն էլ փոխարինուած է արեւելահայերէնով: Նոյնիսկ արեւմտահայ գրողներից, թարգմանիչներից բերուած հատուածներն են փոփոխուած, ասես նոր ուղղադրութեամբ գրել նշանակում է թարգմանել¹⁵: Վարուել այսպէս նշանակում է խարխիւել Գ. Նժդեհի գաղափարախօսութիւնը՝ հանելով հիմնաքարերից մէկը: Նշանակում է նաեւ խարխիւել գրողի լեզուի եւ ոճի անխախտելիութեան սկզբունքը:

ԿԱՄԱՐՆԻԿ (ԵՐՋԱՆԻԿ) ԳԵՒՈՐԳԵԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՒՈՐԳԵԱՆ

14 Անդ, 111, 117-118, 121-122:

15 Այս մասին տե՛ս ԳԵՒՈՐԳԵԱՆ, Ե., Ուղղագրութիւնը փոխելը թարգմանութիւն չէ, ի էջմիածին, 2012, Ը, 126-129:

Summary

WESTERN ARMENIAN ELEMENTS IN GAREGIN NZHDEH'S WORKS

KAMARNIK (YERJANIK) GEVORGYAN
SUSANNA GEVORGYAN

Garegin Nzhdeh's works are mainly in Eastern Armenian, but in certain cases he used Western Armenian as well. He included words, lexical variants, and grammatical elements of Western Armenian in the same or adjacent sentences written in Eastern Armenian. Moreover, some passages of Nzhdeh's works, even some complete articles and free verses were wholly written in Western Armenian. In this way, Nzhdeh sought to bring the two branches of the same language closer to each other, thus countering the separation of our nation reflected in the split of the parties, the church, as well as the language.

When republishing Nzhdeh's works, it is important to preserve the original manner and style of his writing, in particular the passages written in Western Armenian, not to render them into Eastern Armenian as was done formerly in certain publications, as well as in the press and on social networks.